

**

Պարը սիրոյ տօնավաճառն է: Սիրոյ դաշնադրութիւններն հոն կկնքուին նախ:

**

Կինն շինականներուն մէջ՝ միայն օգնական է իւր էրիկին, միջակ մարդերու մէջ՝ բեռ եւ ազնուականներու մէջ պատիժ:

3 Նոյեմբեր

Որչափ էլ պնդեն ջերմեռանդ թատրոնասէրներն, թէ թատրոնը բարոյական դպրոց մ'է, չեն կարող խախտել իմ համոզումս, որ է՝ թէ թատրոնն այսօր անդամազննութեան դպրոց մ'է:

Կեանքիս մէջ չեմ հանդիպած հանդիսականի մը, որ թատրերգութեան մը վերջին արարուածէն ետքը քովը նստողին ըսէ.

–Ի՛նչ գեղեցիկ խօսքեր... ի՛նչ գաղափարներ ու սիրուն կտորներ. ի՛նչ հետաքրքրական տեսարաններ:

Բայց կեանքիս մէջ չեմ տեսած բարեպաշտ թատրոնասէր մը, որ թատրոնէն ելած ժամանակ ընկերին չըսէ.

–Ի՛նչ գեղեցիկ դերասանուհի... ի՛նչ սիրուն աչեր... ի՛նչ հետաքրքրական ծունկեր:

Արդ, իրաւունք չունի՞մ պօռալու թէ գեղեցիկ դերասանուհի մը սքանչելի *պիեսա* մ'է:

Իրաւունք ունիս, կ'ըսէք, հաւատալու, բայց ոչ խոստովանելու:

Խոստովանիմ եւ հաւատամ:

Մայրաքաղաքիս մէջ տիկին Հրաչեայի աչերուն վրայ *Նէյլի աշտարակէն* աւելի կ'իստուի, եւ Հրաչեայի հայրն, հեղինակ այդ *պիեսային*, *Նէյլի աշտարակին* հեղինակէն աւելի ծանօթ է թատրոնասէրներու:

Բաւական է, որ Քարաքաշեան երկու քոյրերն կամ տիկին Հրաչեայ կամ ուրիշ գեղեցիկ դերասանուհի մը կամ ասոնց ամենը մէկէն դեր ունենան ներկայացման մը մէջ, կատակերգութիւնն կամ ողբերգութիւնն որչափ ալ աղէկ չըլլայ՝ դարձեալ թատրոնը հանդիսականներով կ'լեցուի:

Ինչպէս առանց գործքի հաւատքը մեռեալ է, այնպէս ալ առանց գեղեցիկ դերասանուհւոյ ամենէն ընտիր ողբերգութիւնն մեռեալ է: